№ 132 Յուլիսի 18 (30) 1881 Յուլիսի 18 (30) № 132

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„Մ Շ Ա Կ“
ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ
ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 Թուի, մինչև յունվարի 1-ը 1882 Թուի:

Բաժանորդութեան գինը 6 րուբլ է: Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція „Мшакъ“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի զզուելի յատկութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր քաղաքային գործեր. Նամակ Ղարսից. Նամակ Շամախուց. Նամակ Գօրուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻ ԶԶՈՒԵԼԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ

—

Մեր Կ. Պօլսի Թղթակից, Գրիգոր Նիկողոսեան, նկարագրում է հայ-կաթօլիկների այն յատկութիւնը, որ նրանք իրանց հայ չեն ճանաչում, ատելութեամբ են վերաբերվում դէպի հայոց ազգութիւնը, դէպի մայրենի լեզուն:

Անկասկած դա մի շատ անների յատկութիւն է:

Բայց արդեօք կաթօլիկութիւնն է այս հրէշաւոր երևոյթի մէջ մեղաւոր, թէ ինքն հայի յատկութիւնը:

Մենք հաստատապէս կասենք որ կաթօլիկութիւնը, կաթօլիկ կրօնը դրա մէջ մեղաւոր չէ այնքան, որքան նոյն իսկ հայի յատկութիւնը:

Եթէ կաթօլիկութիւնը պատճառ լինէր որ հայը դառնալով կաթօլիկ, ուրանում է իր ազգութիւնը, սկսում է ատել իր մայրենի լեզուն, ինչո՞ ուրեմն յոյնը, բօլգարացին կաթօլիկ դառնալով, այնու ամենայնիւ մնում են յափշտակված հայրենասէրներ և ազգասէրներ, մնում են յոյն և բօլգարացի: Կաթօլիկ յոյնը, կաթօլիկ սլավեանցին իրանց միշտ համարում են յոյն և սլավեանցի, խօսում են իրանց մայրենի լեզուով, հիմնում են դպրոցներ իրանց մայրենի լեզուով, գիշեր ցերեկ մտածում են իրանց ազգութեան բարելաւութեան, նրա մտաւոր ու բարոյական առաջադիմութեան մասին: Իսկ հայը հէնց որ կաթօլիկ է դառնում,—դառնում է հայատեաց: Ուրեմն մեղաւորութիւնը կաթօլիկութեան մէջ չէ, բայց նոյն իսկ հայի յատկութեան մէջ է:

Ոչ թէ միայն կաթօլիկ յոյնը և կաթօլիկ բօլգարացին մնում են ազգասէրներ, բայց նոյն յատկութիւնը, նոյն յափշտակված սէրը դէպի իրանց ազգութիւնը և մայրենի լեզուն պահում են մահմեդական յոյնը, մահմեդական բօլգարացին, մահմեդական սերբիացին....

Իսկ հայը հէնց որ փոխում է իր կրօնը, իսկոյն սկսում է ուրանալ իր ազգութիւնը: Այդ ամենալաւ ապացոյց է որ հայի մէջ չը կայ ազգայնութեան գաղափարի հասկացողութեան ամենափոքրիկ նշոյլն անգամ: Հային այնչափ շատ և այնչափ յաճախ կըրկնել են որ ազգութիւնն ու կրօնը մի է, որ առանց լուսաւորչական լինելու չէ կարելի հայ լինել,—որ նա էլ վերջը այս բանին հաւատացել է և այդ համոզմունքը, այդ գաղափարը այն աստիճան խոր արմատներ է գցել նրա ուղեղի ու սրտի մէջ, որ այս կամ այն պատճառով կրօնը փոխելով, նա հաւատացած է լինում որ կրօնափոխութեան հետ փոխվում է և իր ցեղը, իր արիւնը, նա այլ ևս հայ չէ, որովհետև հայը միայն լուսաւորչական է, ուրեմն նա հայերէն էլ չը պիտի խօսի, հային ատի, ամաչի հայ կոչվելուց:

Ագարեանի պէս մի հայ-կաթօլիկ աբեղայ իսկապէս նոյնն է ասում, ինչ որ ասում է մի հայ-լուսաւորչական աբեղայ՝ հայոց ազգութիւնը երևակայական մի բան է, հայոց ազգը կ ր օ ն ա կ ա ն ազգ է:

Եւ ահա հայը՝ լինի նա լուսաւորչական, բողոքական, կաթօլիկ, թէ մահմեդական,—նա միշտ նոյն է մնում՝ մի կ ր օ ն ա կ ա ն ազգ, զուրկ ազգայնութեան գաղափարից, կամ աւելի լաւ է ասել՝ մի աղանդ և ոչ թէ մի ազգութիւն:

Մի՞թէ այն յատկութիւնը որ մենք նըշմարում ենք հայ-կաթօլիկի մէջ, նոյնը չենք տեսնում և հայ-լուսաւորչականի մէջ: Մի՞թէ հայ-լուսաւորչականների մեծ մասը, մանաւանդ լուսաւորեալ մասը խօսում են հայերէն, սիրում են իրանց մայրենի լեզուն, իրանց հայ են համարում: Ոչ, նրանք էլ, ինչպէս հայ-կաթօլիկները, միայն կրօնով իրանց հայ են համարում, բայց ազգութեամբ՝ ոչ: Ազգութեան հիմն է հայրենի հ ո ղ ը և մ ա յ ր ե ն ի լ ե զ ո ւ ն: Լուսաւորչական հայը ոչ թէ այն պատճառով իրան հայ է համարում, որ ապրում է պատմական հողի վրա, որ պատկանում է հայոց պատմական ցեղին և խօսում է մայրենի լեզուով,—այլ միայն այն պատճառով որ պատկանում է լուսաւորչական եկեղեցուն: Գօրանից ի՞նչ է ծագում. որ կարելի է հայրենի հողի վրա էլ չապրել, չիմանալ էլ մայրենի լեզուն,—բայց դարձեալ հայ մնալ: Հայը միայն այն պատճառով հայ է, որ լուսաւորչական է,—այդ է նրա խոր համոզմունքը: Ուրեմն լուսաւորչականութիւնը թողնելով, նա թողնում է և իր ազգութիւնը, որովհետև լուսաւորչական եղած ժամանակն էլ նրա համար ազգութիւն չը կար, այլ միայն կրօն կար, առանց հայրենի հողի, առանց մայրենի լեզուի:

Կաթօլիկ, բողոքական, մահմեդական հայը այն պատճառով իրան հայ չէ համարում, որ լուսաւորչական եղած ժամանակն էլ նա իրան հայ չէր համարում, այսինքն այն մտքով հայ, ինչպէս յոյնը՝ յոյն է, բօլգարացին՝ բօլգարացի է:

Յոյնի համար անհրաժեշտ է յոյն լինել առանց Յունաստանի մասին գաղափարի, առանց յունարէն լեզուի: Իսկ հայը շատ հնարաւոր է գտնում հայ լինել, առանց ազգութեան գաղափարի, առանց մի խօսք անգամ հայերէն իմանալու, միայն պատկանելով լուսաւորչական եկեղեցուն: Նայեցէք մեր բոլոր լուսաւորված հայերի վրա, որոնք ոչ թէ միայն չեն խօսում, չը գիտեն հայերէն, բայց և արհամարհում, ծաղրում, ատում են իրանց մայրենի լեզուն:

Կաթօլիկ, բողոքական և մահմեդական հայերը մեղաւոր չեն, որ իրանց հայ չեն համարում: Նրանց սկզբնական կրօնական դաստիարակութիւնն է մեղաւոր, որ նրանք կատարելապէս զուրկ են ազգութեան գաղափարից: Նրանք կրօնափոխ լինելուց յետոյ այն պատճառով իրանց հայ չեն համարում, որ լուսաւորչական եղած ժամանակն էլ իրանց հայ չէին համարում, այսինքն ազգութեամբ հայ չէին համարում իրանց, այլ միայն կրօնով հայ:

Մեր կրօնական դաստիարակութիւնը, ինչպէս ամեն կրօնական դաստիարակութիւն, ոչ թէ պահպանել է ազգութիւնը, այլ սպանել, մեռցրել է մեր մէջ ազգութեան գաղափարը: Այդ ամենալաւ ապացոյց է որ ազգային գաղափարը կրօնից դուրս է և կրօնի հետ ոչինչ կապ չունի:

Ազգութեան գաղափարը նոր է վարթնում մեր մէջ: Նրան, ի հարկէ, անկարող եղան պատուաստել մեր մէջ ոչ մեր եկեղեցին, ինչպէս այդ չէ կարող անել ոչ մի եկեղեցի, ոչ էլ մեր հարուստ գրականութիւնը, նոյն իսկ հինգերորդ դարի ամենահանճարեղ գրուածները, որոնք բոլորն էլ հիմնված էին միմիայն կրօնական գաղափարի վրա:

Այն էլ պէտք է ասել, որ ազգութեան գաղափարը նոր գաղափար է և Եւրօպայում մինչև անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Այս վերնագրով „Кавказъ“ լրագրի մէջ տպված է հետևեալ յօդուածը:

Բոլոր քաղաքակրթված քաղաքների մէջ գործ են ածում խոհեմ միջոցներ. երբ նորոգում են փողոցները, կամ որ և է նըպատակի համար փողոցի մէջ մի անցք կամ փոս է փորվում, կամ որ և է աշխատանքներ են կատարում, այդ բոլոր դէպքերում փորված տեղերի մօտ փայտերով ճանապարհը կապում են և գիշերները այդ փայտերի վրա լապտերներ են դնվում: Օրէնքը այդ պահանջում է ապահովութեան համար և այդ գործը կատարվում է ոչ թէ միայն բազմամարդ, այլ և ամենայետընկած փողոցներում: Բայց այդ բանը չը կայ մեր օրհնած Թիֆլիսի մէջ, որի տնտեսական գործերը կառավարող վարչութեան համար մօտ 60,000 րուբլ ծախս է լինում: Մեզ մօտ ոչ թէ միայն խուլ փողոցներում անցորդները կարող են իրանց շլինքը կոտրել, իսկ կառքերը ջարդվել, քանի որ փողոցներն էլ շատ վատ են լուսաւորված, այլ և գլխաւոր փողոցների վրա ոչինչ միջոցներ չեն գործադրում հասարակական ապահովութեան համար: Ահա թէ ինչ անցքի վկայ էինք մենք յուլիսի 13-ին գիշերվայ $8^1/_2$ ժամին: Բարեատինսկայա փողոցի վրա, կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատարի տան հանդէպ փորել էին մինչև փողոցի կէսը մարդու հասակի չափ խորութիւն ունեցող մի անցք, որ բանել էր տրօտուարը այգու մօտ: Ոչ մի նախազգուշացնող նշան չէր դրված: Առաջ այդ անցքի մէջ ընկան երկու անցորդներ, որոնք աննշան վէրքեր ստացան: Այնուհետև մի քանի րոպէից յետոյ անցքի մէջ ընկաւ մի փոքր կառք (дрожки) ձիով, իսկ նրանից յետոյ մի Փայետօն, որի մէջ մի կին էր նստած: Բաղդաւորապէս Փայետօնը մնաց անցքի ափին, բայց ձիանները ընկան անցքի յատակի վրա: Մի քանի ժամ շարունակ ամբոխը օգնում էր ողորմելի կառապանին դուրս քաշել անցքից նրա ձիանները, բայց իզուր: Չը գիտենք, թէ ինչով վերջացաւ այդ անցքը Փայետօնի և ձիաններից մէկի վերաբերութեամբ, բայց միւս ձին յուլիսի 14-ին առաւօտը հանեցին անցքից խեղդված: Այսպէս են հսկում Թիֆլիսում բնակիչների ապահովութեան վրա: Այսպէս է գործին վերաբերվում մեր քաղաքային վարչութիւնը:

Կարծում ենք, որ վնասվածները այդ գործը անպատիժ չեն թողնի: Եթէ գանգատ տրվի քաղաքային վարչութեան դէմ, որ այդ դժբաղդութեան և վնասի մէջ գըլխաւոր մեղաւորն է, վարչութիւնը կը պատժվի աններելի անհոգութեան համար և երբ նրա անդամների գրպանները կը վնասվին, միւս անգամ զգոյշ կը լինեն և դարաններ չեն դնի միամիտ բնակիչներին: Ոչ մի դատարան իրաւունք չունի մերժել այդ գանգատը և ի հարկէ չի էլ մերժի:

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

—

Յուլիսի 13

Հրաւէր ստանալով այստեղի երկսեռ դպրոցի տեսչից, գնացի ուսումնարանի հանդէսը (актъ): Առաջին իմ ուշադրութիւնը գրաւեց ուսումնարանի շէնքը, որ բաւական մեծ, յարմար ու մաքուր է: Աշակերտների թիւը հասնում է մինչև 205 (55 աշակերտուհի և 105 աշակերտ): Ուսումնարանը ունի երկու պատրաստական, երկու առաջին և երկրորդ դասատուն, այժմ ուզում են աւելացնել և երրորդ: Ուսուցիչներն են՝ պ. պ. բժ. Ղազաղեան (մի և նոյն ժամանակ տեսուչ), բժ. Կաչկաչեան և այլ չորս ուսուցիչ և երկու վարժուհի: Պ. պ. Ղազաղեան և Կաչկաչեան ձրի են աշխատում, իսկ մնացածները ռոճիկ են ստանում:

Աշակերտներին թուանշանները բաժանելուց յետոյ խաղացին վիճակախաղ (лоттерея): Վիճակ էր դցած աշակերտների ձեռագործները, որ շատ սիրուն էին և լաւ էր յաջողվել փոքրիկ աշխատողներին: Բայց որքան տխուր տպաւորութիւն են թողնում մարդուս վրա այդ տնանկ մանուկները իրանց չքաւորութեամբ: Մինչև անգամ մէկը դրանցից բոլորովին մերկ ոտերով էր, առանց կօշկի, հագած ունէր միայն դձլուած արխալուխ: Ուսումնարանի վարչութիւնը ձրի բաժանում է դրանց գիրք, թուղթ և առհասարակ ուսման պիտոյքը, շատերին մինչև անգամ հագցնում են ուսումնարանի հաշւով: Պ. Ղազաղեան շատ բաւական էր, թէ աշակերտուհիներից և թէ աշակերտներից, որոնք, ինչպէս ասում էր նա, շատ ընդունակ են և աշխատասէր: Այդ երկու

երիտասարդ բժշկները այնպիսի սիրով և եռանդով աշխատում են ամեն կերպ ուսումնարանը բարեաջողելու, այնպես ուրախանում են երեխայոց առաջադիմութեանց վրա, որ դրանց նայելիս մարդս ակամայ զգում է մի անչափ բաւականութիւն։

Հանդէսին ներկայ էին տեղացի հայ կանայք, պարոնայք և անցորդ (проѣзжіе) վաճառականներ, որոնք մեծ ուրախութեամբ առնում էին տոմսակներ և շատ էին ուրախանում, երբ մի որ և իցէ բան էին տանում (չէ որ դա նշան է, որ ճակատագիրը դրանց լաւ աչքով է նայում)

Շատ նկատելի էր այն, որ այստեղ պաշտօն ունեցող հայերից ոչ մէկը ներկայ չէր հանդէսին։ Ասում են, թէ դրանք վախում են հայոց ուսումնարանի մինչև անգամ չէմքը ոտը դնել։

***

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Յուլիսի 11-ին

Պարբերական թերթերը կարդալով, մարդ շատ անգամ պատահումէ այնպիսի թղթակցութիւնների, որոնք գիւղական օրական խնդիրներն են քննադատում և տեղական զեղծումները հարուածում։ Բայց կան քաղաքներ, որոնք փախչում են հասարակաց կարծիքից և գոնէ տարին մի քանի անգամ իրանց ներքին նշանաւոր խնդիրները չեն առաջարկում ընթերցող աշխարհի քննադատութեանը։ Այսպիսի քաղաքներից մէկն է և մեր Շամախին։ Տեսնելով մեր շամախեցւոց անտարբերութիւնը դէպի իրանց կենսական խնդիրները՝ բարւոք համարեցի այս նամակովս սրանց ուշադրութիւնը դարձնել մի քանի անհրաժեշտ խնդիրների վրա, այն է ուսումնարանական, արուեստագործական և հասարակական ապահովութեան։ Ցաւոնի է արդէն՝ որ Շամախում թեմական առաջնորդ է նստում. մի ժամանակ կար այստեղ մեծ թեմական ուսումնարան, ուր պատրաստվում էին քահանայացու և ուսուցիչ երիտասարդներ. 1872 թ. մեծ երկրաշարժից յետոյ այս ուսումնարանի շինութիւնը կործանվեցաւ, մի տարի այս պատճառով ուսումնարանը խափանվեց, իսկ յետոյ իբրև մի ծխական դպրոց շարունակեց իր գոյութիւնը մինչև այսօր, որովհետև եկամուտների աղբիւրները ցամաքում են և ուսումնարանը անկարող է լինում իր թեմական լինելը շարունակել (թէև թեմական անունը դեռ ունի կանոնադրութեան մէջ)։ Այս ինն տարուայ ընթացքում ուսումնարանը ոչ մի բարւոքում չէ ունենում, որովհետև իւրաքանչիւր տարի նոր նոր (գուցէ և անփորձ) ուսուցիչներ է ունենում, որոնց իւրաքանչիւրը իր խելքի կարած ուղղութիւնն է ուզում տալ, բայց մի տարուց աւելի չը մնալով, ուսումնարանը մի փորձաքարի է դարձնում, իսկ խեղճ աշակերտները ոչ մի պատրաստութիւն չունեցած՝ բաց են թողնվում որպէս իրանց ուսման ընթացքը աւարտած։ Այս տարուան այդ ուսումնարանից, դուրս եկած աշակերտները հաւիւ թէ մի որ և է ուսումնարան մտնելու կամ կեանք մտնելու պատրաստութիւնը ունենային։ Խեղճ տղայքը դեռ նոր էին սկսել ուսման ճաշակն առնել և այժմ պէտք է աւարտած համարվեն. գոնէ մի ամիսի տեղեկութիւն ստացած լինէին։ Կրօնագիտութիւնից միայն սրբազան պատմութիւնը գիտէին, իսկ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան և արարողութիւնների վրա և ոչ մի տեղեկութիւն չունէին։ հայոց լեզուից քերականութեան տարրական մասը միայն գիտէին. միւս առարկաներից շատ քիչ տեղեկութիւններ կցկտուր։ Թէև երեւում էր որ ուսուցիչները աշխատել են, իրանց ոյժերը գործ են դրել հաղորդած գիտութիւնը աշակերտների մտքում տպաւորելու համար, բայց ինչ յառաջադիմութիւն կարող է ցոյց տալ մի անփորձ ուսուցիչ մի տարուայ ընթացքում առանց ծրագրի։ Այս տարի ևս եղած ուսուցիչները թողեցին իրանց պաշտօնը և ուսումնարանը պէտք է սեպտեմբերից նոր ուսուցիչներ վարձէ։ Իմ կարծիքով մեր ուսումնարանների անառաջադէմ լինելու պատճառները հէնց ուսուցիչների չուտ չուտ փոփոխվելն է և ուսումնարանների անծրագիր լինելը։ Շամախու թեմը, որ բազմաթիւ գիւղեր և քանի քաղաքներ ունի, մեծ կարօտութիւն ունի թէ ուսուցիչների և թէ քահանաների։ Քառասուն գիւղերից, որոնք Շամախու գաւառումն են՝ միայն երկու երեքը ուսումնարան ունեն. մէկումն էլ անցեալ տարի տէրութիւնը բացեց։ Ամբողջ թեմի մոմավաճառութեան արդիւնքը տեղոյս թեմական ուսումնարանինն է, բայց վերջինս միայն քաղաքիս երկու եկեղեցուցն է ստանում. միւս տեղերից դադարած են, ինչու... ուր են և ուսումնարանի միւս եկամուտները և ուսումնարանի 5000 բուբլի դրամագլուխը, որից 1000 բուբլի միայն յիշվում է և սրա չափ եկամուտ։

Խորհուրդ կը տայինք մեր պատուելի շամախեցիներին մոռանալ իրանց մի ինչին պատճառից յառաջ եկած երկպառակութիւնը և միանալով առաջնորդի հետ՝ բարեկարգել ուսումնարանը. երկպառակութիւնը իրանց է վնաս։

Շամախում կայ և մի օրիորդական վարժարան, որը պահում է մի բաժանորդական ընկերութիւն։ Օրիորդական վարժարանի անհրաժեշտութիւնը մեր քաղաքում անուրանալի է, որովհետև կինը դեռ ևս հարեմական դրութեան մէջ է Շամախում։ Փառք և պատիւ այն անձանց, որոնք արդ վարժարանը հիմնել են. բայց ամօթ այն հասարակութեանը, որ չէ պահպանում այդ հիմնարկութիւնը։ Այժմ էլ սորա անդամների երկպառակութեան պատճառով վարժատան շինութիւնը կիսատ է մնացել, իսկ ուսումնարանը մի կերպ՝ չեղածի հաշվով՝ շարունակում է իր գոյութիւնը։ Թէև սրբազան առաջնորդը ջանք է անում այդ վարժարանի համար, բայց հասարակութեան անտարբերութիւնը և սառնասրտութիւնը դէպի այն՝ սրբազանի ջանքն 'ի դերև են հանում։ Ասում են որ սրբազանի հակառակ կուսակցութիւնը աշխատում է համոզել շատերին, որ իրանց զաւակներին չը ղրկեն վարժարանը, որպէս զի պատճառ ունենան սրբազանին մեղադրելու. և սրան են վերաբերում այս տարուան օրիորդների պակասելը. թէ ինչքան ստոյգ է այս, ես չը գիտեմ (բայց սպասելի է)։

Ամենայն ոք գանգատում է թէ ուսումնարան չը կայ, եղածումն էլ յառաջադիմութիւն չը կայ, տղայքը անկիրթ են մնում, բայց ոչ ոք չէ հոգում, որ ուսումնարանի մէջ յառաջադիմութիւն լինի։

Քաղաքային ուսումնարանը այս վերջին երկու տարիները ոտքի կանգնեց։ Այժմ սա մանկավարժական բաժին ունի (երկու տարի թոյլատրութեամբ իբրև փորձ) և այս տարի վեց գիւղական ուսուցիչ դուրս եկան այն տեղից յաջող քննութեամբ։ Այժմ այս ուսումնարանը իրընդիր է ներկայացրել ուսումնական բարձրագոյն վարչութեան 25 դիպլոմներ պահելու, որոնցից 10-ը կառավարութեան հաշվով չքաւոր աշակերտներից, իսկ 15-ը իրանց հաշվով։ Նոր դիրեկտորը մտադիր է եկող սեպտեմբերից քաղաքային վարժարանում, բացի եղած՝ շարաթական վեց դասերը տեղական լեզուից, նորէն վեց դաս ևս աւելացնել, այսինքն փոխանակ վեց դաս հայոց կամ թուրքաց լեզուից, շարաթական լինելու է տասներկու դաս։ Որովհետև այս դասերի համար պէտք էր աւելորդ ռօճիկ նշանակել ուսուցիչներին և քաղաքային վարժարանն էլ մասնաւոր դրամ չունէր (спеціальная сумма) վասն որոյ դիմեցին տեղոյս հասարակութեանը որ նոր դասերի համար ուսուցչի ռօճիկը, տարեկան 150-ից 200 բուբլի, հասարակութիւնը վճարէ, բայց վերջինս մերժեց ասելով, թէ կարողութիւն չունի։ Այժմ թողնենք շամախեցւոց, որ լաւ մտածեն իրանց ուսումնարանների վրա ու դառնանք արուեստագործութեանը։ Շամախին իր հիմնվելուց ի վեր նշանաւոր է իր մետաքսի գործուածներով. բայց մտնենք սորա գործարանները. ինչ կը տեսնենք։ Զզոյչ պէտք է լինել և խնամով մինչև գետին կռանալ, որ կարողանաս մտնելու, որովհետև դռները շատ նեղ և ցածր են, ներսը խոնաւ և չերամի և թթացութեան հոտն էլ զզուելի կերպով թունաւորումն գործաւորների առողջութիւնը. գործիքները և գործելու եղանակը դեռ հին նահապետական են և այս պատճառով այս գործը ամենևին յառաջադիմութիւն չէ անում։ Գործուածների տեսակներն էլ որոշ են և միայն գիտեն գործել՝ մի փոքր լայն, սպիտակ կամ կարմիր գոյնի հաստ չարսաներ և շապկացու ճոթեր. ուրիշ պատուէրներ չեն կարող ընդունել։ Եթէ վաղուց ուշ դարձնէին այս բանի վրա, այժմ շատ յառաջադիմութիւն արած կը լինէին։ Այժմ որ Շամախին առևտրական ճանապարհից դուրս պէտք է մնայ երկաթուղու գիծը անցնելուց յետոյ, հետևաբար և տեղոյս վաճառականութիւնը պէտք է ընկնի. միակ փրկութիւնը քաղաքիս արուեստներին դիմելն է, գլխաւորապէս մետաքսագործութեանը, յորում արդէն հեղինակութիւն էլ ունի։ Ուրեմն աւելի լաւ կը լինէր որ քաղաքային ուսումնարանին կից մի արուեստական մասը բանային այս արուեստը ծաղկեցնելու համար, որով մեծ զարկ կարելի էր տալ երկրի տնտեսական դրութեանը։ Կամ եթէ Թիֆլիսի դրամատէրերը կամ Բագուի ընկերութիւնները կանոնաւոր գործարաններ բանային տեղս, աւելի շահաւէտ կը լինէր և մեր երկրի հարստութիւնը օտարազգաց ձեռքը չէր անցնի։ Գուցէ երկիւղ ունենան երկրաշարժութիւններից, բայց փայտեայ շինութիւնները կատարեալ անվնաս են։

Շամախեցւոց անտարբերութիւնը միայն այդքան չէ. նրանք հանգիստ ապրելու հոգն էլ չեն քաշում։ Ուսելեղէնի առատութիւնը այստեղ միշտ եղել է և է իսկ, բայց ինչ է պատճառը այժմեան թանգութեան։ Տեղոյս ալիւրածախները (ալլաբները) քաղաքային կշռի տակ եկած ալիւրները միանգամից առնում են առաւօտը ժամի 5-էն (բայց մինչև կէսօրը իրաւունք չունեն) և իրանք էլ գարի ալիւր խառնելով կամ նոյն գարի ալիւրը ցորենի տեղ ծախում են քաղաքացւոց վրա. ում ինչ հոգն է։ Այժմ գիւղում ցորենի թաղարը (25 պուդը) 15 բուբլով ծախվում է, բայց քաղաքում ալիւրի պուդը 1 ր. 30 կոպէկ է. ինչ է պատճառը։ Մսի խանութները աւելանում են, բայց միսը թանգանում է. ինչու համար։

Աւազակութիւնը և գողութիւնը սովորական են դարձել. մեծ աւազակապետը՝ որ քանիցս անգամ Սիբիրիայից փախած է և այժմ բռնված է՝ քաղաքային բանտում թագաւորական կեանք է վարում։ Կատարեալ պետ է բոլոր աւազակներին և քանիցս անգամ փորձ են փորձել փախչելու, բայց չէ յաջողվել, իսկ զինուորներին ծեծել սովորական բան է դարձել նրանց համար։ Ամսոյս 8-ին յայտնի աւազակապետը աղմուկ է բարձրացնում բանտում զինուորների հետ կռուելով։ Տեղական զօրագունդից մի բօտա է գալիս գնդապետի հետ ու կռիւը խաղաղացնում. ականատեսները պատմում են, որ յիշեալ աւազակապետը (զօչին) երկու ապտակ է տալիս գընդապետին, իսկ նրա ընկերներից մէկը նոյն երեկոյին տեղոյս պրօկուրօրի օգնականի կողը դանակ է խրում։ Զար լեզուները պատմում են նաև, որ աւազակապետը, փոխանակ պատժի, թէյ և շաքար պարգև է ստանում վարչական անձինքներից։

Քաղաքում օրը ցերեկով մարդ թակել, վիրաւորել, կողոպտել սովորական է դարձած. արիւնահեղ կռիւներ լինել նոյնպէս։ Երէկ տեղոյս թուրքաց մասում դարձեալ արիւնահեղ կռիւներ եղան. հրացանով վիրաւորվածներ շատ կան, և մեծ մասամբ հետաքրքիր նայողներից։ Ոստիկանութիւնից միայն մի անձն ողղեցութիւն ունի կռուողների վրա. միւսները անկարող են. այս երևում էր երէկվայ կռուից, երբ յիշեալ մի աստիճանաւորի հարուածներից ամբոխը ցրվում էր, իսկ միւս ոստիկանական աստիճանաւորները իրանք փախչում էին։ Ի՞նչ է պատճառը որ տեղս յաճախակի անկարգութիւններ են լինում։ Այստեղ լաւ իրագործվում է ժողովրդական առածը, թէ «կատուն եկել է մեր մարագումն ծնել, պահապանի հսկողութիւնից է։»

Վերջապէս մեր շամախեցիք մինչև երբ պէտք է այսպէս սառնասրտութեամբ և ուրիշի աչքերով նայեն այս տեսակ զեղծումներին։ Մի բան միայն մխիթարական է մեզ համար, այդ եղանակի դուարճալի լինելն է։

Ոմն

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Յուլիսի 15-ին

Գօրուց երկու վերստ հեռաւորութեամբ գտնվում է Տինխիդ գիւղը։ Այս գիւղում կայ մօտ 20 տուն հայ բնակիչ և ունեն մի հայոց Ս. Աստուածածնայ եկեղեցի, որի երէցփոխանն է Ստեփան Թաւաքալեանց։ Ամսիս 13-ին Գօրուց գնում են երկու քահանայ երէցփոխանից հաշիւ պահանջելու։ Այն ժամանակ սա գնացած է եղել հունձի և երբ քահանաները կանչում են սրան, սա բոլորովին առողջ գնում է եկեղեցի և ներկայանում է քահանաներին։ Հաշուից երևացել է, որ Թաւաքալեանցի մօտ գտնվում էր եկեղեցու սեփականութիւն 80 բուբլի, բայց սա մսխած ունենալով այն փողերը, ասել է թէ «ինձ մօտ ոչինչ չը կայ»։ Այս ասելուն պէս երէցփոխանը ընկնում է յատակի վրա կիսամեռ և իսկոյն զրկվում է տեսողութիւնից և լսողութիւնից։ Շատ աշխատում են սրան ուշքի բերել, բայց չեն կարողանում։ Վերջապէս կիսամեռ երէցփոխանին եկեղեցուց տանում են տուն սայլով, որտեղ մի քանի բօպէից յետոյ վախճանվում է։

Ամսիս 12-ին գիշերը մի քանի անբարոյական երիտասարդներ նստած են լինում մի խանութում և գինի խմելիս են լինում։ Սրանք բաւականին լաւ են հարբել։ Այս ժամանակ դեսեատսկին տեսնելով որ խանութը անժամանակ բաց է և այնտեղ գինի են խմում, արգելում է այս և խանութատէրին ստիպում է, որ խանութը փակի։ Այս ժամանակ երիտասարդների և դեսեատսկիի մէջ կռիւ է պատահում։ Կռիւը նրանով է վերջանում, որ երիտասարդի մէկը խանչալով վիրաւորում է դեսեատսկուն։ Դեսեատսկին պառկած է հիւանդանոցում, իսկ վիրաւորողը բանտարկված է։

Գօրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը, մեզանից անկախ պատճառներով ուշացաւ։

—

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է պատասխանել, որ 3000 ր. ամենևին կորած չեն, այլ փոխարինաբար տրուած են տէր Ղևոնդ քահանային։ Հետաքրքիր է իմանալ ինչ, ինչ թէ, որ օրը և ինչ համարով է կայացած հոգաբարձութեան այն օրագիրը, որով վճռվեցաւ տալ խարազանց քահանային 3000 բուբլ փոխարինաբար։ Ուրիշ կողմից, ասում են, որ հոգաբարձուները իրանց մէջ վճռել են մի երկու տարի ձրի ծառայեցնել տէր Ղևոնդին, որպէս կրօնուսոյց, անհետացած գումարը նրա աշխատանքից դուրս գալու համար և այնուհետև արձակել նրան և ուսուցչութենից։

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են։ «Յունիսի 11-ին վերջացան տեղիս տղայոց և օրիորդաց դպրոցի հարցաքննութիւնները։ Թէ տղաները և թէ աղջիկները մեծ առաջադիմութիւն ցոյց տուեցին, մանաւանդ կրօնից, հայոց լեզուից և թուաբանութիւնից։ Այդ պատճառով հասարակութիւնը չնորհակալութիւն յայտնեց թէ հոգաբարձուներին և թէ այդ երեք առարկաների ուսուցիչներին՝ Գաբրիէլ քահանայ Տուրփայեանին, Սարգիս Մէլքումեանին և Յարութիւն Ալիխազեանին։ Բայց պատմութենից, աշխարհագրութենից, ռուսաց լեզուից և մանաւանդ բնագիտութենից աշակերտներն ու աշակերտուհիները համեմատաբար աւելի թոյլ գտնվեցան։»

—

Թիֆլիսում հրատարակվող «Юридическое Обозрѣніе» շաբաթագրի № 16 մէջ հրատարակվեցաւ մի ուշադրութեան արժանի յոդուած «Положеніе Бековъ въ Эриванской губерніи» (Բէկերի դրութիւնը Երևանեան նահանգում) վերնագրով։ Յօդուածը մեծ չէ, բայց ճիշտ կերպով ցոյց է տալիս Երևանեան նահանգի կալուածական խնդրի դեռ ևս անորոշ և խառնաշփոթ դրութեան մէջ գտնվելը։ Յօդուածի հեղինակը Ա. Ֆրէնկէլն է։

—

Մի քանի օր առաջ լրագիրները հաղորդում էին, որ դիտաւորութիւն կայ զրկել Ս. Պետերբուրգի իգական բժշկական բարձրագոյն դպրոցը կառավարչական նիւթական օժանդակութիւնից, իսկ այժմ հաղորդում են որ դիտաւորութիւն կայ, ընդհակառակն, ընդարձակել այդ դպրոցի ուսման ընթացքը։

—

«Тифл. Объявленія» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսեցի մի պաշտօնեայ Մ. ուղևորվելով դէպի Պեատիգորսկ Կովկասեան սարերի վրայով, իր ամբողջ կառքով, որի մէջ նստած էր ինքն իր բազմաթիւ ընտանիքով, գլորվեցան ձորը։ Ցաւոնի չէ դեռ ևս ինչ եղաւ այդ դժբաղդութեան հետևանքը։

—

Ասում են որ դիտաւորութիւն կայ յանձնել զինուորական գիմնազիաները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իշխանութեանը, դարձնելով նրանց բէալական գիմնազիաներ։